ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 2-Լ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր, ներքին անվտանգության, Երևան քաղաքի և մարզային վարչությունների ու ենթակա ստորաբաժանումների պետերին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2026-Ա որոշման և հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու ուղեցույցի իրազեկումն ենթակա անձնակազմին և դրա շրջանակներում մինչև 01.05.2021թ. կազմակերպել համապատասխան ծառայողների կողմից ստուգարքի հանձնումը:
Արդյունքների մասին 3-օրյա ժամկետում հայտնել ՀՀ ոստիկանության շտաբ:

3. Հրամանը ծանոթացնել ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«29» 01 2021թ.
ք.Երևան

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
«29» հունվարի 2021թ. թիվ 2-Լ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

Սույն ուղեցույցն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու և դրանց ընթացք տալու գործընթացն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգից օգտվելու կարգը:

1. Հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներ ընդունելը

Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2017թ. թիվ 1495-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 2021 թվականի մայիսի 1-ից ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում, կենտրոնական ապարատի իրավասու ստորաբաժանումներում և ոստիկանության տարածքային մարմինների հերթապահ մասերում հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու գործընթացներն իրականացվելու է ավտոմատացված տեղեկատվական համակարգի կիրառմամբ:

Հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումների հասկացությունները տրված են նշված որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերով: Նույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է՝ հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումների ընդունման հասկացությունը: Իսկ 2-րդ գլուխը՝ հաղորդումների ընդունման և գրանցման կարգը:

2. Պարեկային ոստիկանության կարգախմբի կողմից բանավոր հաղորդումների ընդունում

Հանցագործությունների մասին ֆիզիկական անձանց բանավոր հաղորդումները պարեկային ոստիկանության կարգախմբի կողմից ընդունվում և ամրագրվում են Պարեկի կողմից հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) (ձև N 1),

Ձև N 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

Պարեկի կողմից հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ

1. ___ _____20 թ. 2. Ժամը՝ ___ ___ րոպե 3.քաղաք (համայնք)_____

4. Ես՝ _____

(ծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

_____

5. ընդունեցի հաղորդում քաղաքացի՝

_____

(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, հաշվառման հասցեն)

5.1. Փաստացի բնակության վայրի հասցեն _____

5.2. էլեկտրոնային փոստի հասցեն _____ 5.3. հեռախոսահամարը_____

(առկայության դեպքում)

5.4. _____

(ծառայողական հասցեն, պաշտոնը)

5.5. _____

անձը հաստատող փաստաթուղթ (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

6. Հաղորդում տվողի առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը

6.1. Առնչվում է _____6.2. Անձի տվյալներ_____

6.3. Աղբյուր_____6.4. Անձի տվյալներ_____

7. Քաղաքացի _____ը նախազգուշացվել է սուտ մատնության համար ՀՀ քր. օր. 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին (նախազգուշացվում է, եթե լրացել է 16 տարին)

7.1._____

(ստորագրությունը)

8. Հանցագործության դեպքի նկարագրությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

8.1. Օրը, ամիսը, տարեթիվը_____-ից _____-ը 8.2. ժամը ___ ___ -ից ___ ___-ը

8.3. Վայրը _____

(օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը)

9. Նշում կտրոն-ծանուցագիր ստանալու մասին_____

10. Հաղորդումն ընդունեց _____11. Հաղորդումը ներկայացրեց_____

(ծառայողի ստորագրությունը) (քաղաքացու ստորագրությունը)

իսկ ոստիկանության իրավասու ստորաբաժանումում կամ տարածքային մարմնում՝ Հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրության (ձև N2) մեջ, որում նշվում են՝

Ձև N2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____

Հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ

1. ___ _____20 թ. 2. Ժամը՝ ___ ___ րոպե 3. քաղաք (համայնք)_____ 4. Ես՝

_____

(ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանման կամ ոստիկանության տարածքային մարմնի անվանումը,

_____

(ծառայողի պաշտոնը, կոչումը, անունը, ազգանունը)

5. Ընդունեցի հաղորդում քաղաքացի՝

_____

(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, հաշվառման հասցեն)

5.1. Փաստացի բնակության վայրի հասցեն _____

5.2. Էլեկտրոնային փոստի հասցեն _____5.3. Հեռախոսահամարը_____

(առկայության դեպքում)

5.4. _____

(ծառայողական հասցեն, պաշտոնը)

5.5. _____

անձը հաստատող փաստաթուղթ (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

5.6. Մասնակցությամբ _____

5.7. Քաղաքացի՝_____

(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, հաշվառման հասցեն)

5.8. Էլեկտրոնային փոստի հասցեն _____ 5.9. Հեռախոսահամարը_____

(առկայության դեպքում)

5.10. _____

(ծառայողական հասցեն, պաշտոնը)

5.11. _____

անձը հաստատող փաստաթուղթ (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

5.12. Մասնակցությամբ _____

5.13. Քաղաքացի՝_____

(անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, հաշվառման հասցեն)

5.14. Էլեկտրոնային փոստի հասցեն _____ 15. Հեռախոսահամարը_____

(առկայության դեպքում)

5.16. _____

(ծառայողական հասցեն, պաշտոնը)

5.17. _____

անձը հաստատող փաստաթուղթ (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

6. Հաղորդում տվողի առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը

6.1. Առնչվում է _____6.2. Անձի տվյալներ_____

6.3. Աղբյուր_____6.4. Անձի տվյալներ_____

7. Քաղաքացի _____ը նախազգուշացվել է սուտ մատնության համար ՀՀ քր. օր. 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին (նախազգուշացվում է, եթե լրացել է 16 տարին) 7.1.

_____

(ստորագրությունը)

8. Հանցագործության դեպքի նկարագրությունը _____

_____

_____

Ձև N 2

_____

_____

_____

_____

_____

_____

_____

8.1. Օրը, ամիսը, տարեթիվը_____-ից _____-ը 8.2. ժամը ___ ___ -ից ___ ___-ը

8.3. Վայրը _____

(օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը)

9. Նշում կտրոն-ծանուցագիր ստանալու մասին_____

10. Հաղորդումն ընդունեց _____ 11. Հաղորդումը ներկայացրեց_____

(ծառայողի ստորագրությունը) (քաղաքացու ստորագրությունը)

Մասնակցությամբ 12. _____ _____

(մասնակցի ստորագրությունը)

13. _____ _____

(մասնակցի ստորագրությունը)

1. Հաղորդում ներկայացնողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, բնակության (հաշվառման) վայրի և ծառայողական հասցեն, հեռախոսահամարը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, նրա առնչությունը հանցագործությանը և իրազեկության աղբյուրը, ստորագրությունը, առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավախախտման կամ պատահարի նկարագրությունը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը.

2. 16 տարին լրացած անձի կողմից հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու դեպքում՝ սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին գրավոր նախազգուշացված լինելու մասին նշումը.

3. Հաղորդում ընդունողի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ստորագրությունը, արձանագրությունը կազմելու վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, որպեն.

4. Նշում ծանուցագիր ստանալու մասին:

5. Հաղորդման արձանագրության մեջ շարադրվում է առաջին դեմքով:

6. Հաղորդում ներկայացնողի կողմից հայերենին չտիրապետելու դեպքում հաղորդումն ընդունվում է հայերենին և այն օտար լեզվին տիրապետող, համապատասխան որակավորում ունեցող թարգմանչի մասնակցությամբ, որին տիրապետում է հաղորդում ներկայացնող անձը: Հաղորդում ներկայացնող անձը հաղորդումը շարադրում է այն լեզվով, որին ինքը տիրապետում է, ինչին հաջորդում է արձանագրությունում թարգմանչի կատարած թարգմանության շարադրումը, որը հաստատվում է թարգմանչի կողմից: Այս դեպքում հաղորդումն ամրագրվում է միայն ոստիկանության իրավասու ստորաբաժանումում կամ տարածքային մարմնում արձանագրության (ձև N 2) մեջ:

7. Եթե հանցագործության մասին հաղորդում ներկայացնող անձը ֆիզիկական թերությունների կամ առողջական վիճակի կամ անգրագիտության հետևանքով զրկված է արձանագրությունն անձամբ ստորագրելու հնարավորությունից, ապա արձանագրությունը տվյալ անձին ծանոթության է ներկայացվում օրինական ներկայացուցչի (ներկայացուցչի) ներկայությամբ, ովքեր իրենց ստորագրությամբ հաստատում են արձանագրության բովանդակության համապատասխանությունն իրականությանը և հաղորդում ներկայացնող

անձի կողմից այն ստորագրելու անհնարինությունը: Այս դեպքում հաղորդումն ամրագրվում է միայն ոստիկանության իրավասու ստորաբաժանումում կամ տարածքային մարմնում՝ արձանագրության (ձև N 2) մեջ:

8. Եթե հաղորդում ներկայացնող անձը հայտնում է իր տվյալները, սակայն հրաժարվում է ստորագրել ոստիկանության ծառայողի կազմած արձանագրությունը, ապա ոստիկանության ծառայողը դրա մասին նշում է կատարում արձանագրության մեջ (հնարավորության դեպքում արտացոլելով հրաժարման պատճառները): Արձանագրությունը սույն կարգի համաձայն ստորագրվում է կազմողի կողմից և ներկայացվում գրանցման:

Հաղորդումների ընդունման ընթացքը

Եթե ծառայության ընթացքում կարգախմբին դիմում է քաղաքացին հաղորդում տալու ցանկությամբ, կարգախմբի ավագը վեբ հավելվածում (Լուսանկար N1) մուտք է գործում համակարգ, լրացնելով համապատասխան (Username- օգտագործողի անունը և Password- գաղտնաբառ) դաշտերը (Լուսանկար N2),

Լուսանկար N1



Լուսանկար N2



Մուտք գործելով «Կարգախմբեր» բաժին և «Իմ կարգավիճակը» ենթաբաժին (Լուսանկար N3) փոխում է իր կարգավիճակը «Հաղորդման ընդունում» սեղմելով նշված կոճակը (Լուսանկար N4), որից հետո դյուրակիր համակարգչի (պլանշետ) վրա ակտիվանում է «Անձի նույնականացում» հավելվածը (Լուսանկար N5):

Լուսանկար N3



Լուսանկար N4

Լուսանկար N5



1. Համակարգը «Հաղորդման ընդունում» հրահանգը ինքնաշխատ ձևակերպում է որպես «Ահազանգ կարգախմբի կողմից»՝ «Հաղորդումը» փոխկապակցելով ահազանգին, այնուհետև անմիջապես փոխանցում ՕԿԿ հերթապահին:

2. Համակարգը «Ահազանգ կարգախմբի կողմից» հրահանգը ստանալուց ինքնաշխատ կերպով ստուգում է կարգախմբի պարեկների մարմնի տեսախցիկների կարգավիճակը և եթե դրանք միացված չեն, ապա դրանք միացնում՝ ձայնագրվող տեսաֆայլերի անվանումները որոշակի ալգորիթմով փոխկապակցելով ահազանգի նույնականացուցիչի հետ:

3. Հետագայում, անհրաժեշտության դեպքում տարածքային մարմնի հերթապահ մասում՝ սահմանված ընթացակարգով և ժամկետներում, հարթապահ մասի աշխատանքային վեբ հավելվածից կարող է տրվել հրահանգ՝ տեսանյութերի արխիվից դրանք սահմանված ժամկետում չջնջելու և պահպանման ժամկետը երկարացնելու վերաբերյալ:

Պարեկի կողմից անձի նույնականացում

Անհրաժեշտության դեպքում պարեկային կարգախմբի ավագն իր աշխատանքային ձևաչափում կարող է ընտրել «Անձի նույնականացում»: (Լուսանկար N6)

Լուսանկար N6



Անձը հաստատող փաստաթղթով

4. Եթե քաղաքացին իր մոտ ունի անձը հաստատող փաստաթուղթ,
5. Տեղեկատուից ընտրում է «ՀՀ քաղաքացի» կամ «Այլ երկրի քաղաքացի» դաշտը,
6. Ընտրում փաստաթղթի տեսակը՝ «Անձնագիր», «ID քարտ» կամ «Վարորդական վկայական» (Լուսանկար N7):
7. Սեղմում է «Լուսանկարել», որից հետո հերթականությամբ լուսանկարում է փաստաթուղթը և քաղաքացու դեմքը (Լուսանկար N8) և (Լուսանկար N9):

Լուսանկար N7



Լուսանկար N8



Լուսանկար N9



8. Ծրագրային ապահովումը ավտոմատ կերպով կարդում է փաստաթղթի տվյալները՝ պատկերելով դրանք էկրանին և ինքնաշխատ եղանակով վեբ ծառայությունների (API) միջոցով հարցումներ է իրականացնում «Բնակչության պետական ռեգիստր», «ՍԷԿՏ համակարգ» և «Վարորդական վկայականների» համակարգ:

9. Համակարգը ինքնաշխատ ստուգում է անձին համապատասխան հաշվառումներով՝ էկրանին ցուցադրելով դրա արդյունքը:

10. Եթե փաստաթղթի տվյալները համապատասխանում են, անցնում է 13-րդ կետին:

11. Եթե փաստաթղթի տվյալները հաշվառումների հետ չեն համապատասխանում, սեղմում է «Ստուգել դեմքով», որից հետո Ծրագրային ապահովումն ինքնաշխատ եղանակով վեբ ծառայությունների (API) միջոցով հարցումներ է իրականացնում «Դեմքերի նույնականացման համակարգ»:

12. Համակարգից ստացված անձանց տվյալներից ընտրում է կոնկրետ անձին

13. Եթե անձը նույնականացել է սեղմում է «Նույնականացված» ստեղնը, իսկ չնույնականացվելու դեպքում՝ «Չնույնականացված», որից հետո միջոցներ է ձեռնարկում անձի ինքնությունը պարզելու, ապա՝ նույնականացնելու ուղղությամբ:

14. «Անձի նույնականացում» հավելվածը փակվում է՝ անձի տվյալները ցուցադրելով վեբ հավելվածում բացված Ահազանգի էջում:

Դեմքով նույնականացում

15. Եթե քաղաքացին իր մոտ չունի անձը հաստատող փաստաթուղթ, տեղեկատուից ընտրում է «ՀՀ քաղաքացի» կամ «Այլ երկրի քաղաքացի» դաշտը:
16. Ընտրում է «Անձնագիրը առկա չէ» նշիչը:
17. Սեղմում է «Լուսանկարել» ստեղնը և լուսանկարում քաղաքացու դեմքը (Լուսանկար N10) և (Լուսանկար N11):

Լուսանկար N10



Լուսանկար N11



18. Ծրագրային ապահովումն ինքնաշխատ եղանակով վեբ ծառայությունների (API) միջոցով հարցումներ է իրականացնում «Դեմքերի նույնականացման համակարգ»:

19. Համակարգից ստացված անձանց տվյալներից ընտրում է կոնկրետ անձին և սեղմում «Ընտրել» ստեղնը:

20. Համակարգը ինքնաշխատ էկրանին ցուցադրում է ընտրված անձի տվյալները և ստուգում է անձին համապատասխան հաշվառումներով՝ ցուցադրելով դրա արդյունքը:

21. Եթե անձը նույնականացել է, սեղմում է «Նույնականացված» ստեղնը, իսկ չնույնականացվելու դեպքում՝ «Չնույնականացված», որից հետո միջոցներ է ձեռնարկում անձի ինքնությունը պարզելու, ապա՝ նույնականացնելու ուղղությամբ:

22. «Անձի նույնականացում» հավելվածը փակվում է՝ անձի տվյալները ցուցադրելով վեբ հավելվածում բացված ահազանգի էջում:

«Արձանագրություն» ենթաբաժին

23. Եթե համակարգում այդ անձի վերաբերյալ չկան սահմանափակող տվյալներ՝ ընտրում է «Կազմել արձանագրություն» ստեղնը, որից հետո բացվում է «Արձանագրություն» ենթաբաժինը (Լուսանկար N12):

Լուսանկար N12



24. Եթե համակարգում այդ անձի վերաբերյալ կան սահմանափակող տվյալներ՝ ակտիվանում է «Այլ գործողություն» ստեղնը, որն ընտրելով իրականացնում է տվյալ իրավիճակի համար իր աշխատանքային ձևաչափում նախատեսված գործողությունները: Ավարտելուց կարող է վերադառնալ հաղորդման ընդունման գործընթացին:

25. Արձանագրություն ենթաբաժնի ձևաչափը ներկայացված է «Ձև N1»-ում՝

26. 1-ին և 2-րդ դաշտերը լրացվում են ինքնաշխատ՝ հիմք վերցնելով «Հաղորդում» հավելվածի գործարկման ժամը և ամսաթիվը:

27. 3-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ հիմք վերցնելով դյուրակիր համակարգչի GPS կոորդինատը՝ այն փոխակերպելով որպես հասցե:

28. 4-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով այն պարեկային ծառայողի անձնական տվյալները, ով մուտք է գործել «Հաղորդում» բջջային հավելված:

29. 5-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Նույնականացման փուլում ընտրված տվյալները:

30. 5.1-ին, 5.2-րդ 5.3-րդ և 5.4-րդ դաշտերը լրացվում են ըստ հաղորդում տվողի կողմից նշված տվյալների: Ընդ որում 5.3-րդ դաշտում նշվում է բջջային հեռախոսահամար:

31. 5.5-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Նույնականացման փուլում ընտրված անձնագրային տվյալները:

32. 6.1-ին դաշտը ընտրում է տեղեկատուից՝ «Ներկայացնողին», «Ներկայացնողի անչափահաս զավակին», «Ներկայացնողի ընտանիքի անդամին», «Այլ անձի», «Անծանոթի»:

33. 6.2-րդ դաշտն ակտիվանում է 6.1-ին դաշտում «Ներկայացնողի անչափահաս զավակին», «Ներկայացնողի ընտանիքի անդամին», «Այլ անձի» ընտրելու դեպքում, որտեղ մուտքագրվում է հաղորդում ներկայացնողի կողմից նշվող անձի տվյալները:

34. 6.3-րդ դաշտը ընտրում է տեղեկատուից՝ «Ներկայացնողը», «Ներկայացնողի անչափահաս զավակը», «Ներկայացնողի ընտանիքի անդամը», «Այլ անձը», «Անծանոթը»:

35. 6.4-րդ դաշտն ակտիվանում է 6.3-ին դաշտում «Ներկայացնողի անչափահաս զավակը», «Ներկայացնողի ընտանիքի անդամը», «Այլ անձը» ընտրելու դեպքում, որտեղ մուտքագրվում է հաղորդում ներկայացնողի կողմից նշվող անձի տվյալները:

36. 7-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով հաղորդում ներկայացնողի անուն, ազգանունը:

37. 7.1 դաշտն ընտրելուց բացվում է պատուհան, որի ձախ անկյունում կա ուղղահայաց 3 ստեղ՝ «Ջնջել», «Հաստատել», «Չեղարկել»: Հաղորդում ներկայացնողը ակտիվ էլեկտրոնային գրիչով (ACTIVE PEN) պատուհանում ստորագրում է: Եթե ստորագրությունը բավարարում է պահանջին սեղմում է «Հաստատել» ստեղնը, որից հետո պատուհանը փակվում է և ստորագրությունը ցուցադրվում է 7.1-ին դաշտում (Լուսանկար N13):

Լուսանկար N13



38. 8-րդ դաշտում մուտքագրվում է իրավախախտման կամ պատահարի նկարագրությունը, որը շարադրվում է առաջին դեմքով:

39. 8.1 դաշտերը լրացվում են բացվող օրացույցից, եթե օրը կոնկրետ չի հիշում, ապա տրվում է մոտավոր ժամանակահատվածը:

40. 8.2-րդ դաշտը լրացվում է բացվող ժամացույցից, եթե ժամը կոնկրետ չի հիշում, ապա տրվում է մոտավոր ժամանակահատվածը:

41. 8.3-րդ դաշտում մուտքագրում է դեպքի վայրը՝ կարող է լինել կոնկրետ հասցե կամ երթուղի (Լուսանկար N14)

Լուսանկար N14



42. Քաղաքացուց ճշտելով կտրոն-ծանուցագիր տրամադրման պահանջը 9-րդ դաշտում նշում է «Այո» կամ «Ոչ» նշիչները:

43. 1-ից 9-րդ դաշտերը լրացվելուց հետո սեղմում է էկրանի վերևի հատվածում գտնվող «Ուղարկել ստուգման» ստեղնը, որից հետո Արձանագրության բովանդակությունը հայտնվում է կարգախմբին տվյալ պահին կապակցված ՕԿԿ հերթապահի էկրանին:

44. Եթե լրացվող դաշտերում առկա են կետադրական, ուղղագրական կամ այլ ձևական բնույթի սխալներ, հերթապահը վերադարձնում պարեկին է վերախմբագրման: Տեխնիկական բնույթի վերախմբագրում կատարելուց հետո կրկին ընտրում է «Ուղարկել ստուգման» ստեղնը, որից հետո հերթապահը ստուգելով տեքստը տալիս է իր համաձայնությունը (հակառակ դեպքում ցիկլը կրկնվում է՝ գրանցամատյանում պահպանելով նախրդ բոլոր տարբերակները):

45. Պարեկը ընտրում է 10-րդ դաշտը, որում ստորագրում է (տես 7.1-ին դաշտի լրացնելը) (Լուսանկար N15)

Լուսանկար N15



46. Ընտրում է 11-րդ դաշտը, որում ստորագրում է հաղորդում ներկայացնողը (տես 7.1-ին դաշտի լրացնելը) (Լուսանկար N16):

Լուսանկար N16



47. Հաղորդում ներկայացնողի ստորագրելուց հետո էկրանի վերևի հատվածում գտնվող «Ստանալ նույնականացուցիչ» ստեղն ակտիվանում է, որից հետ Հաղորդում վերցնողը ընտրելով այն, համակարգը արձանագրության համար գեներացնում է հաղորդման հերթական համարը, որը ներկայացվում է «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___» դաշտում՝ ինքնաշխատ տպվում է «Կտրոն-ծանուցագիրը» (Ձև N3) և ակտիվանում «Ուղարկել հաստատման» ստեղնը (Լուսանկար N17):

Լուսանկար N17



48. ՕԿԿ ավագ հերթապահը ստանալով հաղորդման էլեկտրոնային տարբերակը այն ստուգում է, որից հետո այն հաստատում է, նախապես կատարելով համապատասխան նշումներ՝ տեղեկատուներից ընտրելով վարույթ իրականացնող տարածքային կամ կենտրոնական ապարատի ստորաբաժանումը:

49. Հաստատելու դեպքում Հաղորդում ներկայացնողը 5.2-րդ և 5.3-րդ դաշտերում նշված կոնտակտային տվյալների վրա ստանում է հաղորդագրություն «Ձեր կողմից_____օրը ժամը_____-ին ներկայացվել է թիվ_____հաղորդումը, որն ընդունվել է _____-ի կողմից, Հաղորդումը հանձնվել է ՀՀ ոստիկանության_____բաժնին»:

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ստորաբաժանման կամ տարածքային մարմնի կամ իրավասու ստորաբաժանման կողմից հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելը

Հաղորդումների ընդունման ընթացքը

50. Եթե իրավասու ստորաբաժանում կամ տարածքային մարմին դիմում է քաղաքացին հաղորդում տալու ցանկությամբ, հերրթապահ մասի հերթափոխի ավագը վեբ հավելվածի գլխավոր վահանակում ընտրում է «Բանավոր հաղորդման ընդունում»,

51. Համակարգը գլխավոր վահանակից «Բանավոր հաղորդման ընդունում» հրահանգն ինքնաշխատ ձևակերպում է որպես «Ահազանգ»՝ «Հաղորդումը» փոխկապակցելով ահազանգին:

52. Ընտրում է «Համառոտ նկարագրություն» ստեղնը, որից հետո բացված դաշտում ազատ շարադրանքով համառոտ մուտքագրում է քաղաքացու կողմից հայտնած տեղեկությունները:

53. Եթե քաղաքացին չի տիրապետում հայերեն լեզվին կամ ցանկանում է օրինական ներկայացուցչի մասնակցությամբ ներկայացնել հաղորդում, հերթափոխի ավագը նշում է «Թարգմանչի մասնակցությամբ» և/կամ «Օրինական ներկայացուցչի մասնակցությամբ» նշիչները

54. Հերթականությամբ ընտրում է «Անձի նույնականացում» ստեղն ըստ պատկանելիության՝ «Հաղորդում ներկայացնող» հատվածում, «Թարգմանչի մասնակցությամբ» և «Օրինական ներկայացուցչի մասնակցությամբ» նշիչների (եթե դրանք ակտիվացել են) հարևանությամբ:

55. Գործողությունները շարունակում է «Անձի նույնականացումը, անձը հաստատող փաստաթղթով» բաժնում նախատեսված հերթականությամբ:

56. Անձի նույնականացման գործընթացն ավարտելուց հետո, եթե համակարգում այդ անձի(անձանց) վերաբերյալ կան սահմանափակող տվյալներ՝ ակտիվանում է «Այլ գործողություն» ստեղնը, որն ընտրելով իրականացնում է տվյալ իրավիճակի համար իր աշխատանքային ձևաչափում նախատեսված գործողությունները: Ավարտելուց կարող է վերադառնալ Հաղորդման ընդունման գործընթացին:

57. Սեղմում է «Ուղարկել հանձնարարական ստանալու», որից հետո համակարգը ծանուցում է ստորաբաժանման պետի (պատասխանատուի) վեբ հավելվածում:

58. Ստորաբաժանման պետը (պատասխանատուն) վերադասության կանոնների համաձայն հանձնարարում է հաղորդում ընդունելու գործընթացը՝ ստորաբաժանման հաստիքացանկից ընտրելով ծառայողին, իսկ տեղեկատուից՝ կոնկրետ հանձնարարականը:

59. Ուղղահայացում որևէ օղակի բացակայության դեպքում, ճշտելով հանձնարարականը հերթապահ մասի հերթափոխի ավագը կարող է մուտքագրել համակարգ համապատասխան ծառայողի տվյալները՝ որպես բանավոր ցուցում և նշելով ումից է ստացվել:

60. Ծառայողը՝ ում մակագրվել է իրականացնել հաղորդումը քննարկելու գործընթացը իր աշխատանքային ձևաչափում ընտրում է ահազանգը և ծանոթանում:

61. Եթե քաղաքացու կողմից ներկայացվող տեղեկությունները ակնհայտ հանցագործության մասին չեն, առաջարկում է ներկայացնել դիմում սահմանված կարգով՝ տալով համապատասխան բանավոր պարզաբանում:

62. Եթե քաղաքացին համաձայնվում է դիմում ներկայացնել կամ հրաժարվում է ՀՀ ոստիկանություն դիմելուց, սեղմում է «Այլ ընթացք» ստեղն:

63. Բացված պատուհանում տեղեկատուից ընտրում է «Կներկայացվի դիմում», «Հրաժարվում է դիմելուց» և «Տեղեկությունների հայտնում միայն բանավոր», ինչպես նաև նշում է քաղաքացու հետ կապ հաստատելու հեռախոսահամարը՝ հրաժարվելու դեպքում նշելով այդ մասին:

64. Եթե քաղաքացու կողմից ներկայացվող տեղեկությունները հանցագործության մասին են, ընտրում է «Արձանագրություն» ստեղնը: Պետք է հաշվի առնել, որ ահազանգի ցանկացած փուլում, եթե քաղաքացին ցանկանում է ներկայացնել հաղորդում և մասնակիցներն արդեն նույնականացված են, ծառայողն իր վարույթում գտնվող ահազանգի ձևաչափում կարող է ընտրել «Բանավոր հաղորդման ընդունում» ստեղն, որով անցում է կատարելու «Արձանագրություն» ենթաբաժնում:

Անձի նույնականացում անձը հաստատող փաստաթղթով

65. Եթե քաղաքացին իր մոտ ունի անձը հաստատող փաստաթուղթ, հերթապահ մասի հերթափոխի ավագը տեղեկատուից ընտրում է «ՀՀ քաղաքացի» կամ «Այլ երկրի քաղաքացի» դաշտը,

66. Ընտրում փաստաթղթի տեսակը՝ «Անձնագիր», «ID քարտ» կամ «Վարորդական վկայական»,

67. Սեղմում է «Լուսանկարել», որից հետո լուսանկարում է քաղաքացու դեմքը և անձը հաստատող փաստաթուղթը (տեխնիկական հագեցվածություն չունենալու պարագայում միայն պատճենահանում անձը հաստատող փաստաթուղթը):

68. Ծրագրային ապահովումը ավտոմատ կերպով կարդում է փաստաթղթի տվյալները՝ պատկերելով դրանք էկրանին (տեխնիկական հագեցվածություն չունենալու պարագայում անձը հաստատող փաստաթղթի տվյալները) և ինքնաշխատ եղանակով վեբ ծառայությունների (API) միջոցով հարցումներ է իրականացնում «Բնակչության պետական ռեգիստր», «ՍԷԿՏ համակարգ» և «Վարորդական վկայականների» համակարգ:

69. Համակարգը ինքնաշխատ ստուգում է անձին համապատասխան հաշվառումներով՝ էկրանին ցուցադրելով դրա արդյունքը,

70. Եթե փաստաթղթի տվյալները համապատասխանում են, անցնում է հաջորդ կետին

71. Համակարգից ստացված անձանց տվյալներից ընտրում է կոնկրետ անձին

72. Եթե անձը նույնականացել է սեղմում է «Նույնականացված» ստեղնը, իսկ չնույնականացվելու դեպքում՝ «Չնույնականացված»:

73. «Անձի նույնականացում» հավելվածը փակվում է՝ անձի տվյալները ցուցադրելով վեբ հավելվածում բացված էջում:

Նույնականացումը դեմքի լուսանկարով

74. Եթե քաղաքացին իր մոտ չունի անձը հաստատող փաստաթուղթ տեղեկատուից ընտրում է «ՀՀ քաղաքացի» կամ «Այլ երկրի քաղաքացի» դաշտը,

75. ընտրում է «Անձնագիրը առկա չէ» նշիչը,

76. սեղմում է «Լուսանկարել» ստեղնը և լուսանկարում քաղաքացու դեմքը կամ մուտքագրում անձի կողմից հայտնված անհատական տվյալները (անուն, ազգանուն,

հայրանուն, ծննդյան ամսաթիվ): Ծրագրային ապահովումն ինքնաշխատ եղանակով վեբ ծառայությունների (API) միջոցով հարցումներ է իրականացնում «Դեմքերի նույնականացման համակարգ»:

77. Համակարգից ստացված անձանց տվյալներից ընտրում է կոնկրետ անձին և սեղմում «Ընտրել» ստեղնը,

78. համակարգը ինքնաշխատ էկրանին ցուցադրում է ընտրված անձի տվյալները և ստուգում է անձին համապատասխան հաշվառումներով՝ ցուցադրելով դրա արդյունքը:

79. Եթե անձը նույնականացել է սեղմում է «Նույնականացված» ստեղնը, իսկ չնույնականացվելու դեպքում՝ «Չնույնականացված»:

80. «Անձի նույնականացում» հավելվածը փակվում է՝ անձի տվյալները ցուցադրելով վեբ հավելվածում բացված Ահազանգի էջում:

«Արձանագրություն» ենթաբաժին

81. Արձանագրություն ենթաբաժնի ձևաչափը ներկայացված է «Ձև2»-ում՝

82. 1-ին և 2-րդ դաշտերը լրացվում են ինքնաշխատ՝ հիմք վերցնելով «Հաղորդում» հավելվածի գործարկման ժամը և ամսաթիվը:

83. 3-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ հիմք վերցնելով ստորաբաժանման տեղակայման համայնքը:

84. 4-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով այն ծառայողի անձնական տվյալները, ով մուտք է գործել «Արձանագրություն» հավելված

85. Հաղորդումը օրինական ներկայացուցչի և/կամ թարգմանիչի մասնակցությամբ ընդունելու դեպքում բացվում են 5.6-ից 5.17-րդ, 11-րդ և 12 –րդ դաշտերը:

86. 5-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Նույնականացման փուլում ընտրված տվյալները

87. 5.1-ին, 5.2-րդ 5.3-րդ և 5.4-րդ դաշտերը լրացվում են ըստ Հաղորդում տվողի կողմից նշված տվյալների: Ընդ որում 5.3-րդ դաշտում նշվում է բջջային հեռախոսահամար:

88. 5.5-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Նույնականացման փուլում հաղորդում ներկայացնողի ընտրված անձնագրային տվյալները

89. 5.6-րդ, 5.12-րդ, 11-րդ և 12-րդ դաշտերը լրացվում են ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով մասնակցության ձևը՝ «Թարգմանիչ» կամ «Օրինական ներկայացուցիչ»:

90. 5.7-րդ, 5.11-րդ, 5.13-րդ և 5.17-րդ դաշտերը լրացվում են ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Նույնականացման փուլում նույնականացված մասնակցի անձնագրային տվյալները

91. 5.8-րդ, 5.9-րդ, 5.10-րդ, 5.14-րդ, 5.15-րդ և 5.16-րդ դաշտերը լրացվում են ըստ մասնակցի կողմից նշված տվյալների: Ընդ որում 5.9-րդ և 5.15-րդ դաշտերում նշվում է բջջային հեռախոսահամար:

92. 6.1-ին դաշտը ընտրում է տեղեկատուից՝ «Ներկայացնողին», «Ներկայացնողի անչափահաս զավակին», «Ներկայացնողի ընտանիքի անդամին», «Այլ անձի», «Անծանոթի»:

93. 6.2-րդ դաշտն ակտիվանում է 6.1-ին դաշտում «Ներկայացնողի անչափահաս զավակին», «Ներկայացնողի ընտանիքի անդամին», «Այլ անձի» ընտրելու դեպքում, որտեղ մուտքագրվում է հաղորդում ներկայացնողի կողմից նշվող անձի տվյալները:

94. 6.3-րդ դաշտը ընտրում է տեղեկատուից՝ «Ներկայացնողը», «Ներկայացնողի անչափահաս զավակը», «Ներկայացնողի ընտանիքի անդամը», «Այլ անձը», «Անծանոթը»:

95. 6.4-րդ դաշտն ակտիվանում է 6.3-ին դաշտում «Ներկայացնողի անչափահաս զավակը», «Ներկայացնողի ընտանիքի անդամը», «Այլ անձը» ընտրելու դեպքում, որտեղ մուտքագրվում է հաղորդում ներկայացնողի կողմից նշվող անձի տվյալները:

96. 7-րդ դաշտը լրացվում է ինքնաշխատ՝ համակարգից ներբեռնելով Հաղորդում ներկայացնողի անուն, ազգանունը,

97. որից հետո հաղորդում ընդունողը նշում է, որ նախազգուշացրել է սուտ մատնության համար ՀՀ քր. օր. 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

98. 8-րդ դաշտում մուտքագրվում է հանցագործության դեպքի նկարագրությունը, որը շարադրվում է առաջին դեմքով:

99. 8.1-ին և 8.2-րդ դաշտերը լրացվում են բացվող օրացույցից, եթե օրը կոնկրետ չի հիշում, ապա տրվում է մոտավոր ժամանակահատվածը:

100. 8.3-րդ դաշտում մուտքագրում է դեպքի վայրը՝ կարող է լինել կոնկրետ հասցե կամ երթուղի

101. Քաղաքացուց ճշտելով կտրոն-ծանուցագիր տրամադրման պահանջը 9-րդ դաշտում նշում է «Այո» կամ «Ոչ» նշիչները:

102. 1-ից 9-րդ դաշտերը լրացվելուց հետո սեղմում է էկրանի վերևի հատվածում գտնվող «Նախնական դիտում» ստեղնը, որից հետո համակարգը գեներացնում է Արձանագրության PDF ֆայլ և ցուցադրում էկրանին: Եթե հաղորդման ընդունմանը թարգմանիչ և/կամ օրինական ներկայացուցիչ չեն մասնակցել, ապա դրանց վերաբերող դաշտերը չեն արտացոլվում:

103. Սեղմում է «Տպել» ստեղնը և տպված արձանագրությունը ներկայացնում ընհաղորդում տվողի (մասնակցի) ընթերցմանը:

104. Եթե լրացվող դաշտերում կարիք կա բովանդակային շտկման, հաղորդում ընդունողը վերախմբագրում է և այն անհրաժեշտության դեպքում կրկին ներկայացնում ընթերցման և ստանալով համաձայնություն՝ սեղմում «Համաձայնեցված» ստեղն (հակառակ դեպքում ցիկլը կրկնվում է՝ գրանցամատյանում պահպանելով նախորդ բոլոր տարբերակները):

105. Դրանից հետո էկրանի վերևի հատվածում գտնվող «Ստանալ նույնականացուցիչ» ստեղն ակտիվանում է, որից հետ Հաղորդում վերցնողը ընտրելով այն, համակարգը արձանագրության համար գեներացնում է Հաղորդման հերթական համարը, որը ներկայացվում է «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____» դաշտում՝ ակտիվացնելով «Ներբեռնել հաղորդումը» և «Տպել հաղորդումը» ստեղները, որից հետո համակարգը գեներացնում է Արձանագրության PDF ֆայլ և ցուցադրում էկրանին: Հաղորդման հերթական համար ստանալուց հետո արձանագրությունում հնարավոր չէ փոփոխություն կատարելը:

106. Սեղմում է «Տպել հաղորդումը» ստեղնը և տպված արձանագրությունը և «Կտրոն-ծանուցագիրը» (Ձև3) ներկայացնում հաղորդում տվողի (մասնակիցների) ստորագրմանը

107. Հաղորդում ընդունողը ստորագրում է «Կտրոն-ծանուցագրի» «Հաղորդումը ընդունեց» դաշտում և «Արձանագրության» 10-րդ դաշտում, Հաղորդում ներկայացնողը՝ 11-րդ դաշտում, իսկ Մասնակիցները՝ համապատասխանաբար 12-րդ և 13-րդ դաշտերում:

108. Եթե հաղորդում ներկայացնողը (այդ թվում մյուս մասնակիցները) հրաժարվում է ստորագրելուց, հաղորդում ընդունողը ստորագրում է 10-րդ դաշտում և կատարում գրառում ստորագրելուց հրաժարվելու և դրա պատճառների մասին (առկայության դեպքում): Այնուհետև աշխատանքային ձևաչափում ընտրում «Չստորագրված ստեղնը» և ակտիվացած չստորագրելու պատճառը դաշտում շարադրում հրաժարվելու պատճառը:

109. Հաղորդում ընդունողը պատճենահանում է տպված, իր կողմից գրառումներ կատարված, ստորագրված և հերթական համար ստացած արձանագրությունը և ներբեռնում այն՝ սեղմելով «Ներբեռնել հաղորդումը» ստեղնը

110. Եթե հաղորդում ներկայացնողը (այդ թվում մյուս մասնակիցները) ստորագրել է Արձանագրությունը, հաղորդում ընդունողը պատճենահանում է տպված, հաղորդման ներկայացման մասնակիցների կողմից ստորագրված և հերթական համար ստացած արձանագրությունը և ներբեռնում այն՝ սեղմելով «Ներբեռնել հաղորդումը» ստեղնը:

Հաղորդման ընթացքի լուծումը

111. Ավարտելով «Արձանագրության» մուտքագրումը աշխատանքային ձևաչափում ընտրում է «Ուղարկել մակագրման»

112. Հերթապահ մասի հերթափոխի ավագը ստանալով ծանուցում՝ ստուգում է ահազանգի բովանդակությունը, որից հետո սեղմում է «Ամրագրում» ստեղն, այնուհետև՝ «Ուղարկել մակագրման» ստեղն:

113. Հերթապահ մասի հերթափոխի ավագը ստանալով ծանուցում՝ ստուգում է արձանագրության բովանդակությունը, այնուհետև՝ «Ուղարկել մակագրման» ստեղն:

114. Որից հետո Հաղորդում ներկայացնողը «Արձանագրության» 5.2-րդ և 5.3-րդ դաշտերում նշված կոնտակտային տվյալների վրա ստանում է հաղորդագրություն «Ձեր կողմից _____ օրը ժամը_____-ին ՀՀ ոստիկանության _____ բաժնում ներկայացվել է թիվ _____ հաղորդումը, որն ընդունվել է _____-ի կողմից»:

115. Եթե հաղորդման ընդունմանը մասնակցել են թարգմանիչ և/կամ օրինական ներկայացուցիչ, ապա «Արձանագրության» 5.8-րդ, 5.9-րդ, 5.14-րդ և 5.15-րդ դաշտերում նշված կոնտակտային տվյալների վրա ստանում են հաղորդագրություն «Դուք որպես _____ մասնակցել եք _____ օրը ժամը_____-ին ՀՀ ոստիկանության _____ բաժնում քաղ. _____ կողմից թիվ _____ հաղորդման ներկայացմանը, որն ընդունվել է _____-ի կողմից»:

116. Ստորաբաժանման պետը ստանալով ծանուցումը անմիջապես իրականացնում է զեկուցագրի համար նախատեսված գործողությունները (մակագրելով և դնելով էլեկտրոնային ստորագրություն արձանագրության վրա)՝ հնարավորություն ունենալով մակագրել միայն «Ընթացքը լուծել ՀՀ քր.դատ.օր.-ի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով»:

117. Դրանից հետո գործողությունները շարունակվում են նախատեսված «Ընթացքը լուծել ՀՀ քր.դատ.օր.-ի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով»: